

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՍԸ

Հոովմէն մեր մասնաւոր «Թղրակից»-ը
փետր. 8 թուով կը գրէ մեզ հետեւեալը.

Վերապատուելի Հայր

Ապշուծեամբ կարդացի, պատահարաբար
ծնոքս իմկած «Ճակատամարտ»-ի վերջիմ թիւ-
ւերէն մէկուն մէջ, Ձեզի դրկած յօդուածս բառ
առ բառ արտատպուած հոն, առանց սակայն
խոստովանելու թէ «Բազմավեպ»-էն արտատը-
պուած է:

Ձեզի գրելուս նպատակը սա է, որ տեղեակ
ըլլաք թէ ես լուր չունիմ, ու մի և մոյմ ատեն
ուրիշ օրինակ մըն ալ չեմ դրկած վերոյիշեալ
օրաթերթին. ազատ էք երկտողով մը յայ-
տարարելու՝ թէ «Ճակատամարտ»-ը ուղղակի
արտատպած է ձեր ամսաթերթէն:

Սոյն ակնարկուածն է «Բազմավեպ»-ի այս
տարուան Գունուարի թուոյն մէջ լոյս

տեսած «Առեփա Մարտտեանի Բացանան-
դեր Հոովմայ մէջ» վերնագրով յօդուա-
ծը, զոր ձԱԿԱՏԱՄԱՐՏ Իր փետր. 3-ի
թիւին մէջ նոյնութեամբ արտատպեր էր՝
առանց «Բազմավեպ»-ի անուան յիշատա-
կութեան:

Այս առթիւ անդրադարձնենք նաև որ
«ԿԱՎՈՒՄ»-ի խմբագրութիւնն ալ տարույս
իր թիւ 3-ի մէջ նոյնութեամբ արտատը-
պած էր «Բազմավեպ»-էն «Հ.»-ի «Յեղիշե
Չարեց Պոեմներ» վերնագրով գրախօսա-
կան յօդուածը, նոյնպէս առանց որ և է
յիշատակութեան:

Արդ կը խնդրենք յիշեալ թերթերու
Պատ. խմբագրութիւններէն՝ որ հաճին այ-
սուհետև այդպիսի պարագաներու մէջ յի-
շատակելու անունը այն թերթին՝ ուրկէ
առած են:

ԽՄԲ. ԲԱԶՄԱՎԵՊ

Ս Ս Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

ԹԵՂԻԿ. — Ամենուն Տարեցոյցը. ԺԸ. Տարի.
1924. Բարեգ. տպ. Զ. Բ. Թիւրպեան. էջ 392.
գին 150 զր. 15 ֆր. 5 չիւ. 1.50 տօլ. 60 տրիւ:

FREDERIC MACLER. — Nouvelle mo-
saïque Orientale. Paris 1923. էջ 267.

ՍՏԵՓԱՆ ՏԱՄՍԱՏԵԱՆ. — Քիշ մըն ալ ժա-
մանց (նոսահաւոր պատմութեան) Գահիրէ 1923.
էջ 94. գին Ե. Ղ. 5:

V. MESTUGÉAN. — Istoria Armenilor. I.
De la origini până VI de Lusignan, ultimul
Rege al Armeniei (1393). Bucaresti 1923. էջ
196. 50 լէյ:

ROBERT LOUIS STEVENSON. — Տք.
ձեթիւ և Մր. Հայտ. — Թրգմ. Տօթթ. Բովնան-
նէս իրովիկեան. Հորոկիշ Վահան Ս. Մայխա-
սեան. (Բանբեր Մատենաշար N.º 3.) Պոստրի
1923. էջ 104. գին 75 սենթ:

ԶՄԻՐՈՆԱՆԱՅ ԿԵԱՆԲԸ. — Զինադադարէն
յետոյ. Ահաւոր փուլուրը. Աթէնք 1924. տպ.

և Մատենաշար «Նոր Որ». թիւ 3. էջ 44. գին
10 տրիւ:

ԳՐՊԱՆԻ ՈՐԱՅՈՅՑ. — 1924. Նուէր իր ըն-
թերցողներուն կազմօղջն:

HERMINÉE HOWYAN. — Images d'O-
rient, Poèmes. Paris 1923. էջ 102, գին 3 ֆր.:

MESROB J. SETH M. R. A. S. — The
Society of Mekhithar. Calcutta 1924. Printed
at the «Catholic Orphan Press». էջ 26. գին
1 սուփի:

ԼԵՒՈՆ ՄԵՍՐՈՊ. — Օմար Խայեամ. Կեանքը
և գործը և իր Քառանկները (պարսկերէն թեւ-
գրեն բարբոսնուած). Գարիգ 1923. Տպ. Ներ-
սէս. էջ 144, գին 1.50 տոլար. ճափոնական
թուղթի վրայ 5 տոլար:

ՅՈՎԱԼԷ Զ. ՄԻՐՋԱՅԵԱՆ. (թրգմ. թեւ-
գրից). — Օմար Խայեամ. Բաքա Թահէր և Զա-
նազան. Թէհրան 1923. (Հորոկ. Մ. Մարթինի).
Տպ. Ընկ «Մոգիլն», էջ 155: